ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ

«16» ապրիլի 2024 թվականի թիվ 416-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՄԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԲՆԱԿԻՉՆԵՐ՝ ԱՆԱՀԻՏ ԱՐԹՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԵՎ ԱՐԵՆ ԱՐԹՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված <<Խնամակալության և հոգաբարձության մարմինների>> կանոնադրության 3-րդ գլխի 9-րդ մասի 1-ին կետի ա) ենթակետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 34-րդ, 37-րդ և 38-րդ հոդվածների դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2024 թվականի ապրիլի 12-ի նիստի արձանագրության դրական եզրակացությունը և երեխաների տատիկ՝ Անահիտ Վոլոդյայի Գրիգորյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մարմաշեն գյուղի անչափահաս բնակիչներ՝ Անահիտ Արթուրի Ավետիսյանի /ծնված՝ 2011 թվականի մայիսի 31-ին/ և Արեն Արթուրի Ավետիսյանի /ծնված՝ 2015 թվականի փետրվարի 27-ին/ նկատմամբ խնամակալ նշանակել տատիկին՝ Անահիտ Վոլոդյայի Գրիգորյանին:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումը ու պատասխանատվությունը դնել Ախուրյան համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նախագահի տեղակալի վրա:

3. Սույն որոշման կատարման վերահսկողությունը վերապահել Ախուրյան համայնքի Մարմաշեն բնակավայրի վարչական ղեկավարին:

4. Սույն որոշման մեկ օրինակը տրամադրել Անահիտ Վոլոդյայի Գրիգորյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

16 ապրիլի 2024 թվական
գյուղ Ախուրյան